

նեն մի ամառանոց, արօտատեղի անասունները համար, որը այնքան քիչ տարածութիւն ունի, որ մի ամիս հազիւ է բաւականացնում նրանց անասուններին, ուստի այարցիներն ըստիպուած են կամ Այարի շոգին ու կրակին յանձնել իրանց ընտանիքն ու անասունները, կամ թանգ գնով Դարաւանք գիւղի թիւրքերից արօտատեղիներ ծախ առնել և ամառն անց կացնել:

Մ. Տ.-Ա.

## ԱՄԲՈՒԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ \* )

### I

Ամբոխային կեանքի համար երբեմն լաւ և երբեմն վատ այնքան կարծիքներ են լուրւմ, որ արժէ աւելի մօտիկից ճանաչել ամբոխին և մի հաստատ գաղափար կազմել նրա շարժումների ու հոգեբանութեան մասին:

Նախքան այդ՝ անհրաժեշտ է իմանալ, թէ ամբոխ ասելով ի՞նչ ենք հասկանալու:

Մարդկային զանազան համախմբումներին տալիս ենք զանազան անուններ.— ասում ենք՝ ընտանիք, ընկերութիւն, հասարակութիւն, ժողովուրդ, ազգ և այլն: Սրանցից իւրաքանչիւր խումբ կազմող մարդիկ կամ անհատները միմեանց հետ կապուած են ամուր և մշտապէս: Այդ ամուր և մշտապէս կապակցութիւնը առաջ է դալիս անհատների զգացմունքների, ձգտումների, տնտեսական ու հասարակական վիճակի գլխաւոր կէտերի միակերպութիւնից: Պարզ է, որ առանց դրանց չէին կարող գոյութիւն ունենալ ոչ ընտանիք, ոչ ընկերութիւն, ոչ համայնք, ոչ ժողովուրդ, ոչ ազգ և այլն: Վաղ թէ ուշ նրանք կը կազմալուծուէին, կը քայքայուէին: Այդ համախմբումների կազմութեան համար ապատճառ պէտք է լինէին էական կէտերով միատեսակ հոգեկան արտայայտութիւններ, միատեսակ

\* ) Կազմելիս ի նկատի եմ ունեցել «Преступная толпа» С. Сигеле, 2-ое изд. пр. Павленкова, С-Петербургъ, 1896 г. Ցեղ-տեղ կան ազատ թարգմանածներ: Սիզհեյն ի-ռալացի հեղինակ է:

տնտեսական ու հասարակական շահեր. սա ակնհերև ճշմարտութիւն է:

Չէ որ ամբոխ ասելով էլ հասկանում ենք մի խումբ մարդիկ. արդօք ի՞նչ է ամբոխի և միւս համախմբումների մէջ եղած զանազանութիւնը: Այս հարցի վերաբերմամբ կան տարբեր կարծիքներ. սակայն յարմարներից մէկն է Ֆրանսիացի սոցիոլոգ Տարդի կարծիքը, որը ամբոխին բնորոշում է այսպէս. «Ամբոխ կազմող անհատները մի որոշ տեղում համախմբուում և կապուում են ժամանակաւորապէս. նրանց մէջ չկայ ամուր ու մշտական կապակցութիւն, ինչպէս այդ գոյութիւն ունի մի հասարակութեան, մի ժողովուրդի, մի ընտանիքի անդամների մէջ: Այս անհատների գիտակցութիւնը համարեա դադարում է. նրանք փոխադարձ ազդեցութեամբ ստանում են մի ընդհանուր յատկութիւն, որ առանձին-առանձին վերցրած՝ շատերը չունին»: Իսկապէս ի՞նչ կապ կարող է լինել պատահաբար մէկ-մէկի գլխի հաւաքուած զանազան մարդկանց մէջ: Օրինակ՝ մի խանութի պատուհանում ցոյցի դրուած առարկաները գրաւում են մէկի ուշադրութիւլը. նա կանգնած՝ հետաքրքրութեամբ նայում է. մի երկրորդը նրան տեսնելով՝ առանց իմանալու թէ բանն ինչունն է՝ մօտենում է նրան. այսպէս գալիս է երրորդը, չորրորդը և այլն. կարճ ժամանակից յետոյ կը տեսնէք, որ պատուհանի առաջ ժողովուում է բազմազան հասարակութիւն: Կամ մի-երկու մարդ տեսնելով հեռուում բղաւող, կռուող մարդկանց՝ շտապով վազում են այն կողմը. ուրիշները ոչինչ չգիտեն այդ մասին, միայն նկատում են վազողներին և իրանք էլ սկսում են այն կողմը վազել. ամենինչ արդէն վերջացած է. չնայած դրան՝ էլի այսուայն անկիւնից հաւաքուում են զանազան հասակի ու սեռի անհատներ. շատերը բուն պատճառը չգիտեն: Մենք կարող ենք նոյնպէս ամբոխ համարել թատրոններում հաճաքուած բազմութիւնը, երդուեալ դատաւորներին և ընդհանրապէս այն հասարակական ժողովները, որոնք գումարւում են կարճ ժամանակով, ինչպէս օրինակ՝ հողաբարձական, երեսփոխանական ընտրութիւն և այլն:

Այսպէս՝ ամբոխը մեծ մասով ներկայացնում է բազմատեսակ մարդկանց մի այնպիսի խումբ, որտեղ լինում են երկու սեռից էլ ամեն հասակի, ամեն դասակարգի, հասարակական ամեն տեսակ դիրքի ու պարապմունքի և ամեն տեսակ բարոյական ու կուլտուրական աստիճանի աէր անհատներ: Մրանք կանխօրէն համաձայնութեան չեկած՝ բախտի բերմունքով, անսպասելի կերպով միանում կազմում են մի խումբ:

Ամբոխի կատարած գործերը և ամբոխային շարժումները

հասկանալու համար պէտք է այս հարցը տալ.—արդեօք նոյն հոգեբանական օրէնքներով են կառավարուում մարդկային խմբերը, ինչ հոգեբանական օրէնքներով որ կառավարուում են անհատները:

Այս հարցին պատասխանելուց առաջ յիշենք միջանի փաստեր, որոնք ըստինքեան կարող են մեր ցանկացած նպատակին հասցնել և հէնց նոյն հարցի պատասխանը տալ:

Ո՞ւմ յայտնի չեն երբեմն կրկնուող այն կոպիտ սխալները, որոնք կատարուում են զանազան ժողովներում. երբեմնակի այնպիսի անհատներ են ընտրուում այս կամ այն հասարակական գործը ղեկավարելու, գործի գլուխ անցնելու, որոնք ղերան համապատասխան ոչ պատրաստականութիւն, ոչ անձնական ընդունակութիւն և ոչ էլ անձնական արժանիք ունեն: Երբեմն հասարակական այն տեսակ վճիռներ են տրուում, որոնք դարձեալ հակառակ են առողջ բանականութեանը: Միայն յետոյ ժողովականներից շատերը առանձին-առանձին գղջում են իրանց արածի վրայ, բայց արդէն ուշ է, ամենինչ եղած պրծած է: Անուն-անուն փաստեր յիշելու կարիք չկայ. դա կեանքի մէջ այնքան սովորական բան է, որ իւրաքանչիւր խելահաս մարդ կամ կարգացած է, կամ լսած և կամ անձնապէս փորձած է:

Սիգհելէի գրուածքից արժէ մէջ բերել հետևեալ դէպքերը.

«Նա ականատես եմ եղել, թէ ինչպէս արդար են ճանաչուել երեք երիտասարդներ, որոնք ամենաստոր վիրաւորանքներ հասցնելով մի խեղճ ու թշուառ աղջկայ՝ վերջը այդ անգութները չհանգած կիր են դրել նրա մարմնի քնքոյշ, զգայուն մասի վրայ և դրանով պատճառել են նրան սոսկալի տանջանք: Երիտասարդները անձամբ խոստովանուել են իրանց չարագործութիւնը:

Միթէ դատաւորներից ամենմէկը առանձին վերցրած կարող էր արդարացնել այդ տեսակ յանցաւորներին. շատ կասկածելի է»:

«Գալոֆալօ զիտնականը պատմում է մի փորձի մասին, որը կատարուել է վեց յայտնի բժիշկների վրայ. նրանց մէջ եղել են հոչակաւոր պրոֆեսսորներ: Բոլորին խնդրել էին դատել գողութեան մէջ մեղադրուող մի մարդի: Չնայած յանցանքը հաստատող ակնյայտնի փաստերին՝ նրանք մեղաւոր չեն ճանաչել այդ մարդին և միայն յետոյ են հասկացել իրանց սխալը»:

«Մի ուրիշ տեղ մօտ ժամանակներս (1896) երգուեալ դատաւորները արդարացրին մի ամբողջ ընտանիքի՝ հօր, կնոջ

և որդու ձեռքով կատարած չարագործութիւնը: Սրանք մեղադրուում էին իրանց մօտ ծառայող մէկ խեղճ երեխայի սպանութեան գործում, որն այդ ընտանիքում առանց այն էլ տանջուում էր չլուած խստութիւններով:

Սպանութեան մանրամասնութիւնները սարսափելի են: Երբ հայրը արդէն խեղճ ծառային խեղդել վերջացրել էր, կինն էլ մեծ մահակի երկու հարուածով զոհի գլուխը ջախջախում է:

Ո՞վ կարող էր մտածել, թէ մի անպաշտպան երեխայի վրայ կատարուած այդ զգուելի յանցանքը կը ներուի երդուեալ դատաւորների կողմից:

Արդեօք ի՞նչ են ցոյց տալիս այս բոլոր փաստերը և սըրանց նման շատ-շատերը: Նրանք միայն հաստատում են, որ տաններկու (երդուեալ դատաւորների թիւը) անողջամիտ մարդիկ կարող են տալ բոլորովին անհեթեթ ու անմիտ վճիռ: Այսպէս անհատների համախմբումը կարող է տալ այն տեսակ արդիւնք, որը բոլորովին հակառակ ու անհամապատասխան է լինում այդ անհատներից իւրաքանչիւրին՝ առանձին-առանձին վերցրած»:

Թէև ձեռքիս տակ եղած գրքերում չկան փաստեր, բայց մի՞թէ քիչ են և այնպիսի դէպքեր, երբ երդուեալ դատաւորները յանցաւոր են ճանաչել բոլորովին անմեղ մարդկանց:

Միևնոյն երևոյթն է տեղի ունենում նաև բազմամարդ յանձնաժողովների, գեղարուեստագէտների, գիտնականների և արդիւնաբերական ընկերութիւնների նիստերում: Յաճախ պատահում է, որ նրանց վճիռներն իրանց տարօրինակութեամբ զարմացնում, կայծակնահար են անում հասարակութեանը: Ի՞նչպէս, հարցնում են մարդիկ, նրանք կարողացել են այնպիսի եզրակացութեան գալ: Ի՞նչպէս կարող է պատահել, որ տասը կամ քսան գիտնական մարդիկ, տասը կամ քսան գեղարուեստագէտներ միացած՝ կայացրել են այնպիսի վճիռ, որը հիմնուած չէ ոչ գիտութեան և ոչ էլ գեղարուեստի սկզբունքների վրայ:

Ի՞նչպէս է լինում, որ մի գիտնական անձն կարող է մի որևէ հարցի մասին առողջ դատել և խելացի եզրակացութեան գալ, մինչդեռ միքանի գիտնականներ միացած՝ բոլորովին հակառակ արդիւնքի են հասնում:

Չէ՞ որ սովորաբար ասում են, թէ երբ մի խելքի վրայ աւելանայ ուրիշների խելքն էլ, կարող է հետևանքը անհամեմատ աւելի լաւ, աւելի օգտակար լինել:

Սա կարող է այն դէպքում իրաւացի լինել, եթէ խումբ կազմող անհատները ամեն կողմով մէկ-մէկի նման են, եթէ

Նրանք միևնոյն դասակարգային ու տնտեսական շահերով, միևնոյն մտաւոր ընդունակութիւններով ու զգացմունքներով և քաղաքակրթական միևնոյն պահանջներով են ներշնչուած, եթէ նրանց մէջ կայ օրգանական ամուր կապակցութիւն այնպէս, ինչպէս մի որևէ անհատի, օրինակ՝ մարդի օրգանների (գործարանների) մէջ, որոնք փոխադարձաբար մէկ-մէկի հետ կապուած են անխզելի կերպով: Ուրիշ կերպ ասած՝ մենք այն ժամանակ կը ստանանք մարդկային անհատներից առաջացած մի զանգուած, որի յատկութիւնը կը կազմէ անհատների յատկութեան գումարը:

Այս օրէնքը հաւասարապէս վերաբերում է բոլոր միատեսակ առարկաներին, լինեն նրանք կենդանական, թէ ոչ-կենդանական աշխարհից: Օրինակ՝ մի աման իւղի յատկութիւնը նոյնն է, ինչ որ մի կաթիլ իւղինն է: Անզրիացի բնագէտ-փիլիսոփա Հերբերտ Սպենսերն այս ակնյայտնի ճշմարտութեան վրայ է հիմնում իր սոցիօլոգիական վարդապետութիւնը, որ մարդկային հասարակութեան բնորոշ գծերը համապատասխան են լինում անհատ-մարդի էական գծերին ու բնաւորութեանը:

Սա նշանակում է, թէ մարդկային հասարակութիւնը պէտք է ընդունել որպէս ընդմիշտ գոյութիւն ունեցող մի անձնաւորութիւն:

Ինչպէս տեսանք, Հ. Սպենսերի յայտնած միտքը այն զէպքում իր ոյժը կը պահէ նաև մարդկային հասարակութեան վերաբերմամբ, երբ խումբ կազմող անհատները բոլորովին միմեանց նման են և դրականապէս կապուած մէկ-մէկի հետ. այն ժամանակ անշուշտ անհատի ու մարդկային խմբերի գործողութիւնները կը կառավարուեն միևնոյն հոգեբանական օրէնքներով:

Ընդհակառակը՝ որքան անհատների մէջ եղած նմանութիւնն ու կապը պակասի, այնքան աւելի մարդկային հասարակութեան մէջ կատարուող գործերը կը հեռանան անհատական հոգեբանութեան օրէնքների շրջանից: Այնուհետև այդ տեսակ խմբերի գործողութեան պատճառներն ու շարժառիթները պէտք է փնտրել խմբական կամ կոլլեկտիւ հոգեբանութեան մէջ:

Իտալացի մի գիտնական (Է. Ֆերրի) այդ ճշմարտութիւնը նախազգալով ասում է. «Միքանի ընդունակ մարդկանց համախմբումը չի կարող ամեն ժամանակ ծառայել որպէս երաշխաւորութիւն նրանց ընդհանուր ընդունակութեան: Այդ առողջամիտ մարդկանց մէջ կարող է համերաշխութիւն չլինել, և դրանից կ'առաջանայ բոլորովին ուրիշ բան, ինչպէս ըբմիտ-

պէս երկու գազի միանալուց կարող է ստացուել հեղուկ և ոչ գազ, օրինակ՝ որոշ չափով թթուածին ու ջրածին միանալով՝ տալիս են ջուր»,

Իմ կարծիքով՝ դրա համար բաւական չէ, որ մի որևէ խումբ կազմող անհատները ունենան միևնոյն պարապմունքը, հաւասարապէս կրթուած ու զարգացած լինեն, ունենան միևնոյն հասարակական դիրքը, այլ և անհրաժեշտ է գաղափարների, կարծիքների ու ձգտումների միակերպութիւն. հէնց գլխաւորապէս վերջին հանգամանքի մէջն է կայանում համեմարախութիւնն ու օրգանական ամուր կապակցութիւնը:

Տեսնում էք, որ այս և այն խմբական (կոլլեկտիւ) մարմինը, լինի նա բարեգործական, հրատարակչական, առևտրական ու արդիւնաբերական ընկերութիւն, հոգարարձութիւն, ուսուցչական խումբ և այլն, տանում է իր գործը անհամեմատ աւելի լաւ, աւելի խելացի. սա ոչ միայն անհատների ընդունակութեան, այլ գլխաւորապէս գաղափարների ու ձգտումների միակերպութեան արդիւնք է: Գաղափարակցութիւնից բխում է համեմարաչա գործունէութիւնը: Մինչդեռ նոյն կազմով խմբական մարմինները մի ուրիշ տեղում միատեսակ գաղափարների ու ձգտումների պակասութիւնից ոչ միայն չեն կարողանում մի խելացի գործ կատարել, այլ անվերջ խառնակութիւններ ու սկանդալներ են առաջացնում:

Մակս Նորդաու իբրև գիտութեան ծառայող և իբրև շատերին յայտնի անձն՝ իր ուշագրաւ հետեւալ կարծիքով ասում է. «Միացրէք 20 կամ 30 Գէօթէներ, Կանտեր, Հիմհոլցներ, Նիւտոններ և այլն, տուէք նրանց ժամանակակից, գործնական խնդիրներ դատելու, հաւանօրէն նրանց վիճաբանութիւնը կը լինի աւելի գեղեցիկ, աւելի լաւ այն վիճաբանութիւնից, որ կարող էր տեղի ունենալ պատահաբար կազմուած ժողովում: Մակայն ինչ վերաբերում է արդիւնքին, ես համոզուած եմ, որ ոչ մի կերպ չէր տարբերուիլ միւս ժողովների տուած արդիւնքից: Ինչո՞ւ է այդպէս. որովհետև 20 կամ 30 ընտիր անձնաւորութիւններից իւրաքանչիւրն իր անհատական առանձնայատկութիւնների հետ միասին ունի նաև ժառանգական ու ցեղական առանձնայատկութիւններ, որոնցով տարբերւում ու ջոկւում է միւս ժողովականներից և առհասարակ ուրիշ մարդկանցից: Կարելի է ասել, որ բոլոր մարդիկ նորմալ՝ (առողջ) վիճակի մէջ արտայայտում են այնպիսի առանձնայատկութիւններ, որպիսիները յատուկ ու ընդհանուր են բոլոր մարդկանց համար: Բոլորին յատուկ ու ընդհանուր առանձնայատկութիւններն ընդունենք X. սրա վրայ պէտք է ա-

ւելացնել իւրաքանչիւրի անհատական յատկութիւնները զանազան նշաններով, օրինակ՝ ա, բ, գ, դ կայլն: Այս ենթադրութեան հիման վրայ, չնայած որ ժողովին մասնակցում են 20 խոշոր հանճարաւոր մարդիկ՝ կը ստանանք 20 X և միայն 1 ա, 1 բ, 1 գ, 1 դ կայլն: Պարզ է, որ 20 X անշուշտ կը յաղթէ առանձին-առանձին գոյութիւն ունեցող ա, բ, գ, դ...-ին: Ուրիշ կերպ ասած՝ մարդկային սովորական էութիւնը կը յաղթէ անհատական անձնաւորութեանը և հասարակ բանուորի փափախը կը ծածկէ բժշկի ու փիլիսոփայի գլխարկը:

Երբ Մակա Նորդաուի ենթադրած ժողովի՝ ընտիր մարդկանց կամքի գործերն ու շարժումները չեն կատարում անհատական հոգեբանութեան օրէնքների համաձայն, ապա ուրեմն այդ երևոյթը սրբան աւելի ուժեղ կարող է լինել այն խմբերի ու հաւաքումների մէջ, որոնք պատահաբար են կազմում, ինչպէս օրինակ՝ մի որևէ դասախօսութեան ուղնդիրները, թատրոնի հասարակութիւնը, փողոցներում ու հրապարակներում յանկարծակի կազմուած խառնիճաղանճ խմբերը կայլն:

Ոչ մի կասկած չկայ, որ այսպիսի մարդկանց համախմբումները երբէք չեն կարող այն անհատների հոգեկան առանձնայատկութիւնների գումարը ներկայացնել, որոնցից իրանք են կազմուած:

Կրկնում եմ, մի խումբ մարդիկ միայն այն ժամանակ կարող են որպէս մի անհատ ճանաչուել, երբ նրանք հաւասար են կամ գոնէ շատ նման են միմեանց և ներշնչուած են միևնոյն գաղափարներով, միևնոյն ձգտումներով:

Հասկանալի է, որ հասարակական դիրքով, կրթութեամբ և առհասարակ անհատական առանձնայատկութիւններով, մանաւանդ գաղափարներով ու ձգտումներով միմեանցից տարբեր մարդկանց հոգեկան կարողութիւնները՝ խումբ կազմուելիս՝ չեն աւելանում իրար վրայ, այլ ընդհակառակը՝ կարծէք մէկ-մէկի ոչնչացնում են. ուրեմն երբէք չի կարելի կասկածել, որ այդ տեսակ դէպքերում մի խումբ կազմող մարդկանց խելքի արդիւնքը չի կարող հաւասարուել նրանց մտաւոր ընդունակութիւնների գումարին:

Վերևում ասածներից հետևում է, որ ամբողջային գործողութիւններն ու շարժումները կառավարում են հոգեբանական ուրիշ օրէնքներով, որոնք միանգամայն տարբեր են անհատականից:

Ամբողջային հոգեբանութեան զանաղանութիւնը առաջ է գալիս գլխաւորապէս հետևեալ պատճառներից.

1) Անհատական առանձնայատկութիւնները ճշշուում, խեղդւում են բոլորին յատուկ սովորական մարդի էութեամբ:

2) Նշանաւոր դեր է խաղում գաղափարների ու ձգտումների տարբերութիւնը. առանց գաղափարակցութեան չկայ համերաշխութիւն. առանց համերաշխ գործունէութեան մի որևէ խմբի առաջացրած արդիւնքը շատ անգամ լինում է պակասաւոր ու անմիտ:

3) Անկասկած, նշանակութիւն ունի նաև անհատների թիւն ու քանակութիւնը: Ամենմէկը իրան անհատապէս պատասխանատու չհամարելով՝ երբեմն անփոյթ է լինում, երբեմըն սանձարձակ. հետևանքը դարձեալ լինում է տարօրինակ ու անխելք:

Ամբոխային հոգեբանութեան ուսումնասիրութեամբ մենք կ'ուսումնասիրենք նաև խմբական հոգեբանութիւնը: Դրանով հնարաւորութիւն կ'ունենանք մօտիկից ճանաչելու ամբոխի գործն ու շարժումները, թէ նրանք ինչ չափով օգտակար և կամ վնասակար են հասարակութեանը:

## II

Ամենից առաջ պիտի վերլուծենք, թէ ինչ զգացմունքներ են ստիպում ամբոխին այս կամ այն գործը կատարելու և յետոյ միայն կարելի է փորձել նրա հոգեբանութիւնը որոշել:

Տարդը գրում է. «Ամբոխը զանազանակերպ մարդկանցից կազմուած մի բազմութիւն է: Միմիայն բարկութեան, կատաղութեան, ուրախութեան և առհասարակ կրքերի կայծը մէկից միւսին անցնելով՝ էլեկտրացնում է այդ խառնուկն թոր հասարակութիւնը, որը սկսում է յանկարծակի ստանալ ինքնուիրան լեցուող յատկութիւն: Զանազանակերպ մարդիկ կապուում են միմեանց հետ. աղաղակ, գոռում-գոչում ստանում է մի հրէշաւոր կերպարանք, որը անզուսպ յամառութեամբ ձրգտում է իր նպատակին հասնել: Մեծամասնութիւնը լոկ հետաքրքրութիւնից դրդուած հաւաքուել էր այստեղ, բայց միքանիսին բռնող տենդը յանկարծակի բոլորին ցնցում, բոլորի սըրտին ու զգացմունքին տիրում է, և բոլորը ձգտում են քանդել, աւերել: Այն մարդը, որ եկել էր անմեղին մահից փրկելու, հէնց առաջինը ինքն է վարակուում մարդասպանութեան ձրգտումներով և, որ ամենագլխաւորն է, ինքը դրա վրայ երբէք չէ զարմանում»:

Ի՞նչպէս եղաւ, որ ամբոխն ստացաւ միևնոյն ուղղութիւնն ու ոգին: Տարդը և ուրիշները կարծում են, որ այս տեսակ

դէպքերում զլխաւոր դեր խաղացողն է միմեանց նմանուելու ձգտումը:

Եւ իսկապէս՝ նմանուելու ձգտումը այնքան բնական է իւրաքանչիւր մարդի համար, որ նրա բնորոշ յատկութիւններէից մէկն է կազմում: Բաւական է մի ակնարկ նետենք մեր չտրս կողմը, կը տեսնենք, թէ ինչպէս ամբողջ հասարակական կեանքը նմանութիւնների մի շղթայ է, օրինակ՝ մոդայի, սովորութիւնների, համակրութեան, հնազանդութեան, ուսման ու կրթութեան նմանութիւններ կայն:

Որոշ տեսակէտից հասարակութիւնը կարող է համեմատուել խաղաղ կանգնած լճի՝ մի մեծ տարածութիւն բռնող ջրի հետ, որի մէջ կրբեմն-կրբեմն քարեր ենք գցում. ալիքներից աստիճանաբար լայնանում, տարածւում են քար ընկած տեղից հեռուն ու հեռուն և վերջապէս հասնում են ափերին: Միևնոյն բանն է պատահում և հասարակական կեանքի հետ: Մէկ հանճարեղ մարդ մի գաղափար է գցում հասարակական լճացած կեանքի մէջ, շարժում է նրանց մտքերը, ցնցում է նրանց անշարժ դրութիւնից, այդ գաղափարը սկզբում գտնում է մի կամ միքանի համակրողներ և սկսում է կամայ-կամայ ալիքների նման տարածուել լճացած կեանքի հարթ ու հաւասար մակերևոյթի վրայ:

Տարդի ասելով՝ մարդիկ շատ նման են ոչխարի հօտին. սրանց միջից դուրս է գալիս առժամանակ մի յիմար ոչխար, գուցէ մի հանճարեղը, որը միայն իր օրինակով բոլորին քաշում, իր հետն է տանում:

Ասացինք, որ կեանքը ամբողջովին նմանութիւն ու հետևողութիւն է: Օրինակ՝ այն բոլոր խօսքերը, որ մենք այսօր գործ ենք անում և սովորական բաներ են մեզ համար, մի ժամանակ նորութիւններ ու տարօրինակ բաներ են եղել: Մեծ մարդկանց, մեծ փիլիսոփաների մտքերը, գաղափարները հիմա մեզ համար դարձեալ սովորական և գուցէ հասարակ երևան, էլի իր ժամանակին եղել են նորութիւն և մի անհատի սեփականութիւն, որոնք նմանութեան օրէնքով հետզհետէ տարածուել և ընդարձակուել են:

Միևնոյն երևոյթն ենք նկատում պատմական մեծ դէպքերի և առօրեայ կեանքի վերաբերմամբ: Ամենալուրջ ու ամենաթեթևամիտ մարդիկ, երեխաները, ծերերն ու երիտասարդները, ամենազարգացածն ու տգէտը՝ թէև զանազան չափով՝ քայց և այնպէս բնազդաբար ձգտում են նմանուել այն բանին, ինչ որ տեսնում, լսում և ճանաչում են:

Հասարակական կարծիքի ուղղութիւնը քաղաքականու-

թեան, առևտրի և ընդհանրապէս ուրիշ խնդիրներում զլիաւորապէս որոշուում է նոյն բնագոյով:

Մի գիտնական շատ ճիշտ է ասում. «Այսօր տեսնում էք՝ շատ առևտրականներ ապրանք առնելու տենդով են բռնուած, մի որոշ ժամանակից յետոյ նոյն մարդիկ լցուած են տխրութեամբ, մտածում են, թէ ինչպէս անեն, որ շուտով իրանց ապրանքը ծախեն: Տեսնում էք՝ երբեմն մի խումբ մարդիկ ուրախ տրամադրութեամբ խօսում են այս կամ այն նորութեան մասին, շուտով ձանձրանում են դրանից, և սկսում է նրանց պատել մի տեսակ տխուր ու ճնշող տրամադրութիւն: Եթէ աշխատէք պատճառն իմանալ, իզուր է, լուրջ բան չէք գտնիլ. կը տեսնէք, որ այդ բոլորը հետեանք են միմեանց նըմանուելու բնագոյական ձգտումի:

Մինչև անգամ ազնիւ գործերն ու յանցանքները, ինքնասպանութիւն ու խելագարութիւն, ամենաչնչին ու ամենակարևոր բաները, ամենատխուր ու ամենաուրախալի դէպքերը, մարդկային կեանքի այդ բոլոր-բոլոր երևոյթները ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ նմանուելու հետեանք: Շատ բնական է, որ մարդուն ու կենդանիներին բնածին այս յատկութիւնը ոչ միայն կրկնապատկուած, այլ մինչև անգամ հարիւրապատիկ աւելի է լինում ամբոխի մէջ, որտեղ ամենից շատ բոլորի երևակայութիւնն է գրգռուած, որտեղ ժամանակի ու տեղի միութիւնը սարսափելի կերպով արագացնում է զգացմունքների ու տպաւորութիւնների փոխանակութիւնը:

Ըստինքեան հարց է ծագում. ինչո՞ւ մարդիկ ձգտում են նմանուել: Ասել, թէ մարդը բնագոյարարնմանում է, բաւական չէ: Գիտնականներից ոմանք (Էրրար, Ժոլի և այլն) աշխատել են բացատրել, թէ ինչպէս բարոյականութիւնն է վարակիչ, այնպէս էլ նմանուելն է վարակիչ. սա մի բառախաղ է և ոչ մի նոր բան չի կարող ասել: Իսկական պատճառն իմանալու համար լաւ է հարցի վրայ նայենք այս տեսակէտից.—օրինակ՝ մենք նստած կամ պառկած ենք, չենք կարող շարունակ միևնոյն վիճակի մէջ մնալ, որովհետև նոյն դրութեան մէջ յոգնում ենք. յոգնում է մեր ձեռքը, ոտքը, գլուխը, մէջքը և այլն. յոգնածութիւնը ազդում է մեր ջղերին, և մենք ստիպուած ենք շարժել մեր մարմնի զանազան մասերը; փոխել մեր դիրքը: Մի որևէ բան ցաւ է պատճառում մեր ձեռքին, ոտքին, հարկադրում ենք քաշել մեր ձեռքը, ոտքը և կամ հեռանալ: Քաղցածութիւնը, ծարաւը և այլն մեզ ստիպում են որոշ շարժումներ կատարել: Սենեակում երկար գործելուց յոգնած ու ձանձրացած ենք, օդը խեղդող է դարձել, մենք ստիպուած ենք վեր

Վենալ, լուսամուտները բաց անել և կամ կարիք ենք զգում տանից դուրս գալու, զքօսելու և այլն և այլն:

Ինչպէս մարմնական շարժումներին պէտք է մի ազդող հանգամանք, մի պատճառ լինի, լինի դա արտաքին, թէ ներքին, միևնոյն է, նոյնպէս հոգեկան կամ մտաւոր շարժումներին ևս անշուշտ հարկաւոր է մի ազդող հանգամանք, մի արտաքին պատճառ:

Մենք հասկացողութիւններ ունենք զանազան առարկաների մասին նրա համար, որովհետև երեխայ հասակից հազարաւոր անգամ այդ առարկաները տեսել, շօշափել, համն ու հոտն ենք առել, եթէ ունեցել են. ուրեմն նրանք որպէս արտաքին պատճառներ ազդել են մեր զգայարանների վրայ և մեր մտաւոր աշխարհի սեփականութիւնն են դարձել: Ուրիշ շատ բաներ սովորել ենք կարդալով, զանազան մարդկանցից լսելով: Հասկացողութիւն ունենք զանազան գաղափարների մասին այն հանգամանքի շնորհիւ, որ շատ անգամ նրանց մասին կարգացել կամ լսել ենք մեր շրջապատողներից և այլն: Այսպէս մեր ամբողջ հոգեկան աշխարհն էլ արտաքին պատճառների, արտաքին ազդեցութիւնների արդիւնք է:

Այս հիման վրայ շատ ճիշտ են ասում Տարգը և իտալացի հոգեբան Սերգիւն, որ անհատի իւրաքանչիւր գաղափարը, իւրաքանչիւր հոգեկան շարժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արտաքին տպաւորութիւններից կամ ազդեցութիւններից առաջացած երևոյթ: Ամենմի մարդ շարժում, գործում, մտածում է շնորհիւ այն ազդեցութեան կամ ներշնչման, որը կարող է առաջանալ մի որևէ առարկայի տեսնելուց, արտասանուած խօսքերից, ձայնից, մի որևէ շարժումից: Այդ ներշնչումը կամ ազդեցութիւնը կարող է տարածուել միայն մի անհատի, կամ միջանիսի և կամ մինչև անգամ շատ-շատերի վրայ. այդ ներշնչումը համաճարակի նման տարածուում է հասարակութեան հետաւոր խաւերը, մէկին ըաց է թողնում իր ազդեցութիւնից, միւսին քիչ է ազդում, երրորդին բոլորովին կլանում է: Վերջին դէպքում որքան էլ տարօրինակ ու սարսափելի երևոյթներ առաջ գան, դրանք զօրեղ տպաւորութեան, զօրեղ ներշնչման հետևանք են, ներշնչման, որը հոգեբանական ամեն մի երևուոյթի առաջին ու զլխաւոր պատճառն է կազմում: Կարող է փոփոխուել երևոյթի ուժեղութեան աստիճանը, իսկ երևոյթի էութիւնը միշտ էլ կը մնայ նոյնը:

Ահա այսպէս մարդկանց միմեանց նմանուելու ձգտումը վարելի է բացատրել արտաքին ազդեցութեամբ կամ ներշնչումով:

Միևնոյն ներշնչումով կարելի է բացատրել հիպոստական քունը: Առհասարակ անհատը ազդուող ու տպաւորուող բնաւորութիւն ունի. այնքան ուժեղ կերպով ազդուող մարդիկ կան, որոնց տպաւորուող բնաւորութիւնը հիւանդութեան է հասնում: Այսպիսիները դառնում են համարեան կամազուրկ արարածներ և իրանց ներշնչողի կոյր գործիքը: Մինք տեսնում ենք այդ թէօրիայի հաստատութիւնը մարդկային բոլոր գործերի մէջ:

Միթէ պարզ չէ, որ կրթութիւնն ու դաստիարակութիւնն էլ ենթարկուում են նոյն օրէնքին, աշակերտը բնազգաբար նըմանում է իր դաստիարակին՝ ազդուելով ու ներշնչուելով նրա ամենմի շարժումից, ամեն մի խօսքից: Ո՞վ չգիտէ, որ իւրաքանչիւր քաղաքական, գիտական ու կրօնական նոր վարդապետութիւն սկզբում մի անհատից անցնում է երկրորդին, երրորդին և վերջապէս կամաց-կամաց աւելի հեռուն տարածւում դարձեալ վարակիչ ներշնչումով:

Քաղաքական ու կրօնական զանազան համոզմունքներէ պատկանող հերձուածների մէջ եղած վէճերը, կռիւները և միւշէ անգամ խելագարութեան հասած կատաղի գործողութիւնները պէտք է բացատրել դարձեալ ներշնչումով, որ մէկից միւսին անցնելով ստանում է հակայական չափ ու ծաւալ:

Ինչպէս մի հանճարաւոր մարդ իր խելացի մտքերով կարող է շատերին ներշնչել ու վարակել, այնպէս էլ մի խելագար իր խելագարութեամբ, մի ինքնասպան իր օրինակով կամ ինքընասպանութեան մասին յղացած գաղափարներով կարող է շատ շատերին վարակել, իր յետէից քաշ տալ:

Օրինակ՝ մի գիտնական ուշադրութեան արժանի հետեւեալ դէպքն է պատմում. «Ազնիւ ու աշխատասէր մի ընտանիքում կային երեք քոյր. սրանցից 19 տարեկան փոքր աղջիկը մի օր անսպասելի կերպով եկեղեցում ցոյց տուեց խելագարութեան ուժեղ նշաններ: Այս վիճակով նրան տուն տարան: Դէպքն այնքան վատ ազդեց հօր վրայ, որ ութ օրից յետոյ նա էլ խելագարուեց: Մի քիչ անցած՝ մայրը և տասնհինգ օրից յետոյ՝ մեծ մայրն էլ խելագարուեցին: Երբ հիւանդուտ երեխաները ջղային ցնցումներով են բռնւում, երբեմն նոյն տեսակ ցնցումներ են առաջացնում ներկայ գտնուողների վրայ:

Նկատուած է մի հիւանդանոցում, որ մէկ ընկնաւոր (էպիլեպտիկ) աղջիկ վայրկենաբար նոյն տեսակ հիւանդութիւն է ներշնչել միւս հիւանդներին:

Փորձը ցոյց տուել և տալիս է, որ եթէ մենք ապրենք մի այնպիսի շրջանում, որտեղ մարդիկ անկապ-անկապ են մտա-

ծում, դատում ու գործում, մեր ուղեղն էլ կամաց-կամաց ազդուելով այդ հիւանդոտ ուղղութիւնից՝ ձգտում և ստիպում է մեզ շրջանին նմանուել մեր դատողութիւններով ու գործերով:

Ինչ վերաբերում է ինքնասպանութեան դէպքերին, կարելի է ասել հետևեալը. երբեմն պատահում է, որ զանազան պատճառներով սիրահարուած զոյգերից մէկը միւսին համոզում, ներշնչում է միասին ինքնասպանութիւն գործել, և կատարում են: Երբեմն ինքնասպանութեան են դիմում ամբողջ ընտանիքներ, որոնք այդ քայլն են անում համարեն միշտ խեղճութիւնից ու կարիքից ստիպուած: Սովորաբար հօր մէջ միտք է ծագում ինքնասպանութեան մասին. նա յայտնում է այդ միտքն իր կնոջն ու երեխաներին և ստիպում է հետևելու իրան: Յիշեմ երկու բնորոշ դէպք. 1893 թ. Պարիզում մի ընտանիքի բոլոր անդամները՝ հայր, մայր և չորս երեխայ ածխահար լինելով՝ ինքնասպանութիւն են գործել: Նոյնաման դէպք պատահել է 1885 թ. Անգլիայում, ինքնասպանութեամբ վերջ են տուել իրանց կեանքին հայր, մայր և երեք երեխայ:

Ուրիշ տեսակի անթիւ փաստեր կան վարակիչ ինքնասպանութեան մասին: Օրինակ՝ Ֆրանսիայի Լիօն քաղաքում մի քանի կանայք՝ կեանքից բեզարած ու ձանձրացած՝ երկու-երկու, երեք-երեք իրանց գետն են գցել ու խեղդուել: Մարսելում մի քանի ջահիլ օրիորդներ միասին անձնասպանութեան են դիմել անյաջող սիրոյ պատճառով:

Այս բոլորի նման յանցագործութիւնն էլ վարակիչ է: Բնածին ու ժառանգական մի յանցաւոր \*) ներշնչելով՝ զրաւում, իր յետևից քաշ է տալիս մի պատահական յանցաւորի և դարձնում է նրան իր գերին: Մի կամ մի քանի ժառանգական յանցաւորներ կարող են իրանց յետևից քաշ տալ երիտասարդ պատահական յանցաւորներին և կազմել մի սոսկալի խումբ կամ աւազակների ու չարագործների զանազան խմբակներ, որոնք մի տեսակ պատուհաս են դառնում հասարակական խաղաղ կեանքի համար: Սրանք աներկիւղ կերպով կատարում են ամեն տեսակ նիւթական ու բարոյական

\*) Հոգեպէս հիւանդ, հարբեցող, զոյ ու աւազակ ծնողների զաւակները մեծ մասով լինում են բարոյապէս ընկած անհատներ. սրանք իրանց ծրնողներից և բույէ հեռաւոր նախնիքներից ժառանգած վատ սովորութիւնների ու ձգտումների հիման վրայ՝ իրանցից անկախ կերպով ձգտում են յանցանքներ գործել. անհ սրանց ստում ենք ժառանգական յանցաւորներ, հոգեպէս ու բարոյապէս հիւանդներ: Իսկ որոնք պարզապէս ստիպուած են յանցանք կատարում, նրանց ստում ենք պատահական յանցաւորներ:

չարիքներ: Երբ մի խեղճ աղջիկ այդպիսի անպիտաններին զոհ է դառնում, նրանք չեն բաւականանում, որ խեղճի պատիւն են արտաւորել, բաւական է, որ նրանցից մէկը տանջելու, չարչարելու մի նշան տայ, իսկոյն միւսներն էլ ներշնչուած մէկի օրինակից՝ ամեն տեսակ զաղանութիւններ թոյլ կը տան իրանց: Հէնց այդպիսի դէպք պատահել է մի թշուառ կնոջ հետ. սրան բռնել ու բռնաբառել է 15 հոգուց կազմուած մի չարաբարոյ խմբակ. այսքանը բաւական չհամարելով՝ խեղճին ենթարկել են հազարումի տեսակ տանջանքի և անբախտ կնոջ մարմնի չորս կողմը սկսել են երգելով պտոյտներ անել ու թռչկոտել:

Միթէ ակնհերկ չէ, որ ամբոխային զանազան շարժումների ու մանիֆեստացիաների պատճառը դարձեալ նոյն ներշնչումն է: Միթէ ակնհերկ չէ, որ ամբոխի մէջ մէկ մարդի աղաղակը, հեռտորի խօսքերը, միքանի համարձակների արարքը ներշնչող ազդեցութիւն են անում նրանց վրայ, որոնք լսում են աղաղակը, խօսքերը կամ տեսնում են մարդկանց արածները. այդ ներշնչումը ընդունակ է դարձնում նրանց՝ իբրև նախըրի՝ ամեն տեսակ գործողութիւնների: Միթէ պարզ չէ, որ ընդհանուր նշանակութիւն ունեցող վարակիչ ներշնչումը աւելի մեծ թափով է ցոյց տալիս իր ազդեցութիւնը ամբոխի վրայ շնորհիւ այն հանգամանքի, որ միտժամանակ՝ միևնոյն տեղում համախմբուած կան շատ մարդիկ, և որ վարակումը ամենահեշտ կերպով կարող է մէկից միւսին անցնել: Էլ ոչ մի կասկած չկայ, որ միմեանց նմանուելու յատկութեան հիմքը կազմում է փոխադարձ ազդեցութիւնը կամ ներշնչումը:

Մէկի ուրախութիւնը, տխրութիւնը, ծիծաղը, սոււրցը, ծափահարութիւնը կայլն կարող է առանց խորը համոզմունքի ու գիտակցութեան առաջացնել ընդհանուր ուրախութիւն, տխրութիւն, ծիծաղ կայլն: Մտաւոր աշխարհում ընդհանուր է հետևեալ օրէնքը. որոշ հոգեկան դրութեան արտայայտութիւնը առաջացնում է ականատեսի մէջ նոյնպիսի վիճակ: Դիցուք ծառի վրայ հանգստանում են մի խումբ թռչուններ. բաւական է, որ մէկը վտանգ նկատելով՝ թևերը թափահարէ թռչելու, իսկոյն միւսներն էլ նրան են հետևում՝ առանց գիտենալու բուն պատճառը:

Մեծ քանակութեամբ մարդիկ բղաւում, աղաղակում, վազում են, բայց շատերը չգիտեն պատճառը. այդպէս են վարւում, որովհետև տեսնում և լսում են ուրիշներին այդպէս անելիս:

Ամբոխային շարժումների մէջ իզուր է փնտրել պարզ

գիտակցութիւն. համարեա դադարած է գիտակցութիւնը. մէկի կամ միքանիսի համար պարզ է իրանց արարքի նպատակը. մեծամասնութիւնը անուամբ, գործում է ընազդաբար միմեանց նըմանուելու վարակիչ ներշնչումով. ահա սա է ամբոխային հոգեբանութեան էութիւնը:

Աւելի յաճախ լսում է ամբոխի կատարած աւերումների ու բարբարոսութիւնների, քան թէ բարութեան կամ քաջագործութեան մասին: Սխալ է կարծել, թէ ամբոխը միշտ ընդունակ է միմիայն չարագործութեան և ոչ մի անգամ բարութեան ու հերոսութեան: Բայց հետաքրքիր է իմանալ, թէ ամբոխային կեանքում դրանցից մին է աւելի իշխող դեր կատարում. արդեօք չարիք ու բարիք հասցնելը պատահականութեան և որոշ հանգամանքների արդիւնք է, թէ՞ մէկը կամ միւսը յայտնի պատճառով աւելի գերակշռող է հանդիսանում: Ահա մի ուշագրաւ հարց ամբոխայի հոգեբանութեան մէջ, որ դարձեալ կարօտ է պարզաբանութեան ու բացատրութեան:

Չնայած որ խնդիրը դեռ վիճելի է, բայց և այնպէս մի շարք գիտնականներ այժմ ձեռքի տակ եղած փաստերի ու գիտական թէօրիաների վրայ հիմնուած այն կարծիքին են, որ ամբոխը ի ընէ աւելի հակումն է ցոյց տալիս չարիք, քան թէ բարիք անելու: Դրանում մեզ կարող է համոզել նոյնիսկ սովորական դիտողութիւնը. ամբոխը համարեան միշտ սարսափ է ազդում, նրանից մի լաւ բան հազիւ կարելի է սպասել:

Ամբոխային կեանքը մի այնպիսի միջավայր է ներկայացնում, որտեղ չարութեան սերմը աւելի հեշտ է աճում-զարգանում, մինչդեռ բարութեան սերմը շատ անգամ ոչնչանում է: Ինչո՞ւ է այդպէս:

Այստեղ չխօսելով այն զանազանակերպ էլեմենտների մասին, որոնցից ամբոխն է կազմուած, որտեղ բարեսիրտ մարդկանց կողքին կանգնած են լինում անտարբեր ու դաժան մարդիկ, որտեղ շատ անգամ ազնիւ մարդկանց շարքն են ընկած լինում սրիկանիւրն ու յանցաւորները, մենք այդ հարցի վերաբերմամբ կը բաւականանանք այն ընդհանուր հայեացքով և կ'ասենք, որ համախմբուած մարդկանց մէջ առանձին անհատների լաւ յատկութիւնները ոչ թէ գումարւում են միմեանց հետ, այլ ընդհակառակը փոխադարձաբար ոչնչացնում են մէկ-մէկի:

Նրանք ոչնչանում են ընական, մինչև անգամ թուաբանական օրէնքի անհրաժեշտութեան պատճառով: Ինչպէս մի-

քանի բառերի միջին թուաբանականը \*) չի կարող հաւասար լինել նրանցից մեծին, այնպէս էլ մարդկանց համախմբումը իր արարքների մէջ չի կարող արտացոլացնել աւելի բարձր ընդունակութիւններ, որոնք միմիայն նրանցից մէկի կամ միքանիսի բնորոշ կողմերն են կազմում. խումբը ցոյց կը տայ այն առանձնայատկութիւնները, որոնք յատուկ են բոլոր անհատներին կամ գոնէ մեծամասնութեանը:

Վերևում ասուեց, որ խմբական հոգեբանութիւնը հարուստ է արտակարգ երևոյթներով: Միանալով հարիւր կամ հազար մարդ՝ կարող են այնպիսի գործեր կատարել, որպէսին նրանցից և ոչ մէկն առանձին չէր կարող անել: Լինելով մարդկանց համախմբումից դուրս միշտ չէք ստանալ սքանչելի հետեանքներ. շատ անգամ հետեանքը կը լինի միջակ, մինչև անգամ երբեմն էլ շատ վատ:

Սերգին ճիշտ է նկատում, շնաւորութեան ամենացածր ու ամենաբարձր շերտերը, որոնք քաղաքակրթութեան ու դաստիարակութեան շնորհիւ կազմուած և հաւաքուած են միքանի անհատների մէջ և այդպէս նրանց դարձրել են մի տեսակ արտոնեալ դասակարգ, այդ բոլորը նսեմանում, ջնջում է բոլորին յատուկ միջին շերտերով. ընդհանրութեան մէջ միջին շերտերն են յաղթանակը տանում, իսկ միւսներն անյայտանում են»:

Այս վարդապետութիւնը դաւանող գիտնականներից Սիգհելին միևնոյն ժամանակ աւելացնում է. «Դրանով մենք բոլորովին չենք ցանկանում ասել, որը ամբար կատարելապէս անընդունակ է բարութեան ու մեծագործութեան, որ նա հետու է բարձր մտքերից ու զգացմունքներից, երբէք: Ես ուրիշ անգամ ասել եմ, որ քաղաքական յեղափոխութիւնների ժամանակ անհատը կարող է այնպէս զրգուել ու յափշտակուել ամբողջի ոգևորիչ ինքնամոռացութեամբ, որ ինքը կը դառնայ հերոս կամ նահատակ. մինչդեռ խողաղ ժամանակ նա կը լինէր սովորական բարի քաղաքացի կամ գուցէ վատը, եթէ նա ապրէր փչացած մարդկանց շրջանում: Շատ փաստեր կան, որոնք կարող են հերքել ամբողջի վրայ դրած այդ ծանր մեղադրանքը, առաւելապէս այն փաստերը, որոնք սկիզբն են առնում հայրենասիրական զգացմունքից: Օրինակ՝ սկսած սպարտական 300 քաջերից, որոնք հայրենիքի պաշտպանութեան

\*) Օրինակ՝ մենք ունենք հետեալ թուերը՝ 20, 30, 60, 70, 100. սրանք զումարելով՝ կը ստանանք 280, որի միջին թուաբանականը իմանալու համար պիտի բաժանենք 5-ի վրայ և կը ստանանք 55. այս 55-ը մեր ընդունած հինգ թուի միջին թուաբանականն է, որը մեծ թուերից (60, 70, 100) և ոչ մէկին հաւասար չէ:

համար ընկան Թերմոպիլեան կիրճում, մինչև իտալական անկախութեան համար զոհուող նահատակներն՝ ուրիշների հետ միասին կազմում են այսպէս ասած մի սուրբ ուղի, մի սուրբ ճանապարհ, որը ըստինքեան ցոյց է տալիս, թէ ամբողջ էլ մի անհատի նման կարող է լաւ լինել, կարող է ամենաբարձր ինքնագոհութեան ու հերոսութեան հասնել»:

Միթէ նոյնը չեն ասացուցանում հայրենիքի պաշտպանութեան համար մղուած բոլոր պատերազմները. միթէ նոյնը չեն ցոյց տալիս այս կամ այն գաղափարի համար մղուած կրօնիները: Մարդիկ իրանց պաշտած տեղի, իրանց փայփայած և սիրած գաղափարների համար ոչ թէ տասնեակներով, հարիւրներով, այլ հազարներով են ընկնում մեռնում:

Անուբանալի է, որ միջակ ընդունակութիւն ունեցող անհատների համախմբումն էլ կարող է երբեմն հասկանալ հանճարաւոր մտքեր ու բարի զգացմունքներ, եթէ մէկը շնորհք ունենայ այդ բոլորը գեղեցիկ ու պարզ կերպով ներկայացնելու, ազդել ու նրանց հոգու և սրտի վրայ. նոյնպէս միջակ և մինչև անգամ բարոյական ցածր հասկացողութեամբ ամբոխը կարող է այն կէտին հասնել, որ ընդունակ լինի հերոսական քաջագործութիւններ կատարելու, եթէ միայն նրան առաջնորդող մի առաքեալ կամ մի ղեկավարող ճարուի: Առհասարակ ամբոխը կարող է հրաշքներ գործել շնորհիւ լաւ հոնտորի, լաւ պարագլխի և ընդհանրապէս շնորհիւ նրանց, որոնք դառնում են ամբոխային գործողութիւնների ընդունակ հերոսը:

Ամբոխի վերաբերմամբ շատ ճիշտ է ասել մի գիտնական (Պիւլլիէզ). «Ամբոխը գրգռուած է. նրան ծովի նման ալեկոծող ոյժը դեռ չէ սկսել գործել. շոգեշարժի կաթսայի նման գոլորշին հաւաքուած, խտացած է, բայց դեռ փականը բացուած չէ. մի դէզ վառուղ կայ պատրաստի, բայց ոչոք նրան կրակ չէ մօտեցրել: Ահա վեր է կենում մի մարդ, երևան է գալիս մի գաղափար կամ լաւում է ազաղակ.—Մահ այս ինչին, թշուառների ըսրեկամին,—հարուածը տուած է, փականը բաց է, վառուղը այրուած: Ահա ամբոխը»:

Ինչպէս անհատի բոլոր գործողութիւնները գլխաւորապէս ժառանգական ու հասարակական \*) պայմանների արդիւնք են, այնպէս էլ ամբոխային գործողութիւնների մէջ գլխաւոր դեր խաղացողը նոյն պայմաններն են: Ամբոխը կարող է իր մէջ

\*) Նշանակութիւն ունին նաև ֆիզիկական պայմանները, կլիման ու տեղը. այս մասին խօսուելու չէ այստեղ:

ծածկուած մի որևէ ոյժ ունենալ, միայն ղէպըը կամ հանգա-  
մանքի բերմունքը կը տան նրա ոյժին այս կամ այն ուղղու-  
թիւնը: Դէպքն էլ այս է. մէկի խօսքը, աղաղակը դառնում է  
ամբոխի վերաբերմամբ աւելի կարևոր, շատ աւելի նշանակու-  
թիւն ունեցող, քան թէ անհատի վերաբերմամբ: Հասարակու-  
թեան մէջ իւրաքանչիւր մարդ իր նորմալ՝ վիճակով այնքան  
դիւրավառ նիւթ չէ. մօտեցրէք նրան այրուող լուցիկի ևայն, նա  
համեմատաբար աւելի դանդաղ կ'այրուի և կամ բոլորովին  
կը հանգչի: Ընդհակառակը, ամբոխը մի շեղչ չոր վառօղի է նը-  
ման. եթէ դուք մօտեցնէք նրան այրուող պատրոյզը, բռնկու-  
մը անխուսափելի է և շուտով տեղի կ'ունենայ: Սյապէս ուրե-  
մըն դէպքը կամ հանգամանքի բերմունքը ամբոխի վրայ սար-  
սափելի ազդեցութիւն է անում շնորհիւ նրա աննոստնոսու-  
թեան \*):

Սյս բոլորից յետոյ ոմանք կարող են մտածել, որ եթէ  
ամբոխային շարժումների ժամանակ խոշոր ու աչքի ընկնող ազ-  
դեցութիւն են անում դէպքերը, ապա ուրեմն չի կարող ճիշտ լինել  
վերն ասուած այն սկզբունքը, որ ամբոխային կեանքում բարու-  
թեան սերմը շատ անգամ մեծնում է, իսկ չարութեան սերմը  
հեշտ աճում, զարգանում է: Որքան էլ ընդունենք, որ ամբոխն  
էլ որոշ ժամանակներում ընդունակ է լինում լաւ ու մեծ գոր-  
ծեր կատարելու, միևնոյն ժամանակ պէտք է ի նկատի առնել  
այն անխուսափելի փաստերը, որ հոգեբանութեան թուարանա-  
կան անդառնալի օրէնքով նոյն ամբոխը աւելի հակուած է դէ-  
պի չարը, քան թէ դէպի բարին այնպէս, ինչպէս մարդկանց  
համախմբումը հակուած է աւելի պակաս խելք ու ընդունա-  
կութիւն ցոյց տալու, քան իր անհատների ընդունակութիւնների  
գումարը պէտք է լինէր: Չնայած որ ամբոխի մէջ թագնուած  
ոյժը դէպքի շնորհիւ կարող է այս կամ այն ուղղութիւնն  
ստանալ, բայց և այնպէս պիտի աչքի առաջ ունենալ և հետեւալ

\*) Սյդ ճշմարտութիւնը իր ազդեցութիւնը ցոյց է տալիս ոչ միայն ամ-  
բոխային յանցանքների ժամանակ, այլ և ուրիշ դէպքերում. օրինակ՝ ժողովըր-  
դական, քաղաքական ընտրութիւնների ժամանակ: Յարմար դէպքում մէկի տ-  
նումը ընկնելով ամբոխի մէջ՝ շատերին կը զբաւի դրանց կամքից բոլորովին ան-  
կախ միմիայն նրա համար, որովհետև այդ անունն ասուեց. եթէ մէկ ուրիշ ա-  
նուն տրուէր, դարձեալ ազդեցութիւնը կարող էր նոյնը լինել: Ըստ օրինակնե-  
րից մէկը յիշենք: Երբ աստիակական Օսման սուլթանը զահալիժուեց, նրան տա-  
պալողներից ոչոք այդ չէր ցանկանում. նրանք միայն խոնարհաբար խնդրում  
էին բուարարութիւն տալ իրանց միջքանի արդար դանդառանքին: Յանկարծ  
ամբոխի միջից պատահաբար լուեց մի անյայտ ձայն. արտասանուեց Մուստա-  
ֆա անունը. ոչոքի մտքով շանցած Մուստաֆան անպատելի կերպով եղաւ  
սուլթան (Montesquieu, „Persidekia pncema“, pncemo 81.):

հանգամանքը. եթէ ամբոխի մէջ բարութիւն անել ցանկացողներ թիւը հաւասար լինի չարութիւն ցանկացողներ թուին, էլի շատ անգամ չարերն են յաղթանակը տանում, որովհետև չարերն ավելի ազդու ներգործող դեր են կատարում, քան թէ բարիները: Իսկ ինչ վերաբերում է ներգործող ու ազդող բարի մարդկանց, նրանց ազդեցութիւնը հանդիպում է շատ արգելքներին. որովհետև եթէ նրանք փորձում են հակառակուել չարերի արարքին և ցանկանում են խաղաղութիւնը վերականգնել, այն ժամանակ էլ լսում են իրանց մտքերի, իրանց ձգտումների վերաբերմամբ սուտ ու սխալ բացատրութիւններ, ստանում են վախկոտի ու դաւաճանի անուն կայլն:

Ահա երբ բարի մարդիկ մի անգամ յանդգնում են հակառակուել ամբոխին, երկրորդ անգամ արդէն չեն համարձակուում հակառակուել. բնական է, որ չարութիւն ցանկացողների ազդեցութիւնն այլևս ոչ մի արգելքի չի հանդիպի: Ժողովրդական խառնակութիւնների ու ապստամբութեան ժամանակ սրբան մարդիկ միմիայն վախից ստիպուած՝ միւսներին մանկանչում են մնա՞ կամ կկցցէ՞ կայլն: Ո՛րքան մարդիկ դաւաճանի ու վախկոտի անուն չստանալու համար լեօսքից անցնում են գործի: Պէտք է ունենալ երկաթէ կամք, որպէսզի կարելի լինի դիմադրել այն բոլոր ծայրայիղութիւններին, ինչ որ կատարում է շրջապատող ամբոխը: Տարաբախտաբար երկաթէ կամք քչերը կարող են ունենալ: Մեծամասնութիւնը հասկանում է, որ վատ է անում, բայց էլի կատարում է, որովհետև ամբոխը նրան բռնում, տանում է: Շատերը գիտեն, որ եթէ չհետևեն ընդհանուր հոսանքին, բացի արհամարհանքից կարող են զոհ դառնալ ուրիշների բարկութեանն ու կատաղութեանը:

Մեծամասնութիւնը ուզէ, չուզէ, ստիպուած է իր հոգեկան դրութեամբ նմանուել իրան շրջապատողներին այնպէս, ինչպէս շատ կենդանիներ իրանց թշնամիներից ազատուելու և ազատ որս անելու համար բնական կերպով ընդունել են իրանց բնական վայրին համապատասխան գոյն \*): Մարդիկ իրանց շրջապա-

\*) Հիւսիսային արջը իր սպիտակ գոյնով հազիւ է նշմարում մշտական ձիւնադառ միջավայրից: Ծաղիկների ու կանաչների վրայ կանգնած շատ թիթեռների դժուարանում ենք ջոկել իրանց գոյնին համապատասխան ծաղիկներից: Կան կենդանիներ, որոնք բոլորովին նման են իրանց գոյնով հողի, ծառի կեղևի և կամ սրէի քարի գոյնին: Չատ անգամ չենք կարող կանաչագոյն գորտին կանաչից, հողի գոյն ունեցող գորտին հողակոյտից զանազանել կայլն:

տողներից նոյնպէս ընդունում են բարոյական որոշ գոյն, որոշ ուղղութիւն. նրանք աղաղակում, անում են այն, ինչ որ ուրիշներն են ցանկանում և անում, դէպի որը տանում է ընդհանուր հոսանքը: Կրկին կ'ասեմ, որ ընդհանուր հոսանքից կարող են բացառութիւն կազմել արտակարգ ընդունակութեամբ և ուժեղ կամքով օժտուած քիչ անհատները:

Ուրեմն եթէ այս բոլորը ճիշտ է, այն ժամանակ դժուար չէ հասկանալ, թէ ինչու ամբոխային կեանքում վատ կրքերն են յաղթանակը տանում՝ ոչնչացնելով փոքրամասնութեան ամենաի բարի ձեռնարկութիւնը:

Վերևում բացատրուեց, թէ սկզբում մի անհատի մէջ առաջացած ու արտայայտուած հոգեկան դրութիւնն ինչպէս ազդում, տարածում է մեծամասնութեան վրայ: Ընդունենք, որ այդ հոգեկան դրութիւնը սաստիկ բարկութիւն է, վայրկենաբար իւրաքանչիւր անհատ իր դէմքի վրայ ցոյց է տալիս բարկութեան նշան. շատ անգամ այս արտաքին նշանը դառնում է իրական բարկութիւն և ամբոխը մինչև անգամ չունենալով ժառանգական տրամադրութիւն՝ բարկութեան ազդեցութեան տակ կարող է կատարել յանցանքներ:

Անկասկած՝ ժառանգական տրամադրութիւնը պակաս դեր չէ խաղում յանցանքներ կատարելու մէջ, բայց դարձեալ գըլխաւոր շարժառիթը ոչ սակաւ լինում է մեծամասնութեան իսկական բարկութիւնն ու գրգռուած դրութիւնը: Այդ տեսակ բարկութիւնը առաջացնում է ամբոխային այնպիսի յանցանքներ, որոնք շատ նման են պատահական յանցաւորների արածներին. զիտենք, որ պատահական յանցաւորներն էլ միայն այն ժամանակ են կատարում յանցանքներ, երբ նրանց ստիպում են հանգամանքները կամ գրգռուած դրութիւնը:

Այսպէս՝ ամբոխային հոգեբանութեան էական կէտերի՝ գլխաւորապէս նմանութեան—ներշնչումի օրէնքի հիման վրայ բաւականաչափ պարզուեցին ամբոխի շարժումներն ու անսպասելի յանցանքները: Հիմա անհրաժեշտ է ուշադրութեան առնել և հետեւեալ հանգամանքը. երբ մի անհատ առանձին մի բան տեսնելով կամ յիշելով՝ բարկանում է, այն չէ, ինչ որ կը լինէր երկուսով, երեքով կամ աւելի մարդկանցով. մէկը միւսի բարկութիւնը տեսնելով՝ աւելի է բարկանում, աւելի կատաղում, փոխադարձաբար միմեանց վրայ ազդելով: Միևնոյնը կը լինի ուրախութեան, տխրութեան և հոգեկան ուրիշ դրութիւնների վերաբերմամբ: Այս պատճառով կարող ենք ասել, որ հոգեկան դրութեան կամ հոգեկան շարժողութեան ուժգնութիւնը մարդկանց թուի համապատասխան աճում, սաստկանում է, մարդկանց, որոնք մի-

աժամանակ միևնոյն տեղում մասնակից են այդ հոգեկան դըրութեանը: Հէնց սրանով կարելի է բացատրել այն ուժգին արտայայտութիւնների պատճառը, որոնք պատահում են թատրոններում և ուրիշ բաղմամարդ համախմբումների մէջ՝ համակըրութեան կամ հակակըրութեան ցոյցերով: Որ իսկապէս անհատների թուի շատութիւնն ու քչութիւնը առանձին նշանակութիւն ունին հոգեկան արտայայտութիւնների ուժգնութեան վրայ, դա ցոյց է տալիս հետևեալ խելացի դիտողութիւնը. մըրջիւնների մասին գրուած մի աշխատանքում մի գիտնական (Ֆորել՝) պատմում է, որ արել է այստեսակ մի փորձ. միմեանց հետ կուռող մըրջիւնների երկու թշնամի բանակից վեր է առել 7 անհատ, 4-ը մէկ բանակից, իսկ 3-ը միւտից. անմիջապէս բոլորին միասին դրել է ապակէ ամանի մէջ: Մի քիչ առաջ գրգուռած ու միմեանց դէմ կուռող եօթը մըրջիւնն էլ հանգըստացել և մինչև անգամ բարեկամացել են:

Անհատների թուի ազդեցութիւնը նկատելի, մինչև անգամ չափազանց աչքի ընկնող է նախ դպրոցներում: Աշակերտներից ու աշակերտուհիներից ամենմէկը առանձին վեր առած սրբան դիւրաթէք, սրբան հնազանդ, սրբան ենթարկուող է երևում. ամենմէկն առանձին տանելի է նաև ուրախութեան, դժգոհութեան ու չարութեան դէպքում. բայց սրբան ուժգնութիւն ու զօրեղութիւն են ցոյց տալիս, երբ միքանիսն են կամ ամբողջ դասարանը. աւելի անզուսպ, աւելի կատաղի են դառնում նրանց ուրախ, տխուր, դժգոհ, չար ու անկարգ արարքները, երբ միացած են մի քանի դասարաններ, մասնաւանդ ամբողջ դպրոցի աշակերտները:

Պարզ է, որ ամբոխային գործողութիւններն առաջ են գալիս թէ հոգեպէս ու բարոյապէս միմեանց նմանուելու ընազդական ձգտումից և թէ ներշնչումից. այս բոլորի հետ առանձին նշանակութիւն ունի անհատների քանակութիւնը \*), որը յաճախ ամբոխի մէջ զարթեցնում է գազանային ընազդներ և երբեմն էլ հերոսութիւն ու բարի զգացմունքներ: Ապա ուրեմն ամբոխային հոգեբանութեան էական կէտերն են նմանութիւն-ներշնչում՝ և անհատների քանակութիւնը:

### S. ՌԱՇՄԱՃԵԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

\*) Մարդիկ և առասարակ անհատները շատ լինելով՝ կարծէք բնական կերպով իրանց մէջ ոյժ են զգում, իրանց համարում են մի տեսակ անընկճելի ու անյաղթելի և կարծէք թէ միաժամանակ զգում են, որ այդպիսի դէպքերում ոչ մէկի վրայ առանձին ծանր պատասխանատուութիւն չէ ընկնում. այս հիման վրայ էլ շատութիւնը տալիս է ամբոխին և առհասարակ համախմբումների լանդզնութիւն ու համարձակութիւն: